ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1897 · ԹԻՒ 3, ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 124

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց Զօրութիւնը.— Ակին Կոտորածը և Յեղափոխականութիւն.— Նամակ Վանեցիէ մը Ոկատմամբ Վանի Դէպքերուն.— Նամակ Պուլկարիայէն.— Պատ. Տր. Փարքի Բանախօսութիւնն Նիւ Եորքի Հայոց.— Այլևայլք։

ՀԱՅՈՑ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Այսչափ կորուստ տալէ վերջը, ինչ՞ ոյժ կը մնայ Հայուն. ինչ՞ յոյս ունինք ապագայի։

Մնացած Հայերը բաւական են ազգային վերածնութեան համար եթէ հարկեղած պայմանները յարգենք։

Եւ պայմաններուն գլխաւորը այն է որ Հայութիւնը միաբանի, մի մարմին լինի ու մի հոգի։

Այս բանին վրայ շատ խօսուած է. սակայն արդեօք ո՛րքան քիչերս ըմբռնած ենք թէ ինչ՞է միաբանութիւնը, միութիւն ինչ՞ կը նշանակէ, և մեր ազգին համար յատկապէս ինչ՞է այդմ հասնելու հնարը։

Անհատներուն շատութիւնը ինքնին զօրութիւն չէ։ Եթէ երեք միլիոն Հայու տեղ տասն միլիոն գտնուէր այսօր, դարձեալ տկար պիտի լինէինք ներկայ պայմաններուն տակ։ Եթէ երկու միլիոն Հայ միայն ալ մնայ, կ'ունենայ ահագին ոյժ եթէ մի մարմին լինի, անհատներու բազմութիւնը թափանցուած լինի մէկ մտքով, ոգեւորուի մէկ ազգային նպատակով, ունենայ մի և նոյն՝ այսինքն ազգային՝ շահերը։

Ազգ չկայ առանց ազգային նպատակի կամ ձգտման, որքան ալ շատ լինին անհատները։

Եթէ Թրքաց Հայաստանը ռուս տիրապետութեան ներքեւ իյնայ, զօրութեան պայման մը իրագործուած կը լինի. բոլոր Հայերը մէկ դրօշի ներքև ժողովուած կը լինին. դպրոց, կաթողիկոսական գահ, կրթական ծրագիր, մի և նոյն օտար լեզուի մը ուսումը փոխանակ հոս թրքերէնի ու հոն ռուսերէնի, մէկ ազգային լեզու փոխանակ արեւելեան և արևմտեան բարբառի, և հետևապէս միութիւն ազգային գրականութեան—այդ ամենը իրականութիւն կը դառնան։

Ոմանք կը վախնան թէ բոլոր Հայոց ռուսական դրօշի ներքև առնուելէն յետոյ կրնայ ուրիշ վտանգ մը սպառնալ մեր ազգութեան, այն է ռուսացում։

Մեք չենք հաւատար այդ վտանգին։ Եւ կը հաւատանք թէ Հայուն ձեռքն է ռուսի հաւատարիմ հպատակ լինելով հանդերձ պահպանել ու զարգացնել իւր ազգայնութիւնը այնպիսի կերպով մը որ ռուսական շահերն իրեն դէմ չգինէ։

Առ այս նպատակ հարկ է որ ազգին բոլոր անհատները, ինչպէս ի վերոյ ասինք, տոգորուին ազգային ոգւով, բառին բարձր նշանակութեամբը առնլով ազգութիւնը և հայութիւնը:

Մեր ազգին այսօր ամենակարեւոր պէտքը առաջնորդութեան պէտքն է, այսինքն, մէկ միտք ներշնչող և ոգեւորող, լուսամիտ առաջնորդութեան պէտքը:

Համոզուինք որ եթէ ունենար մեր ազգը այնպիսի մեծ առաջնորդներ որք հաւասար լինէին մեր ազգային ճգնաժամուն բարձր պահանջներուն, մեր ազգը այսքան ահաւոր կերպով չէր ջ=իջախուէր:

Պէտք է որ մեր ժողովուրդն ալ աչքը լաւ բանայ և փոխանակ իւր կիրքերը փայփայող միակողմանի անձանց ոմանց մտիկ անելու, ուշադրութիւն նուիրէ իրեն անաչառ խօսող և լայն հասկացողութեան տէր առաջնորդներուն, մինչև որ աւելի մեծերն հասնին:

ԱԿԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ

ԵՒ

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կոտորածոց վրայ շատ լսեցինք, բայց տակաւին քիչ բան երեւան ելած է անոնց զարմանալի և զարհուրելի մանրամասնութեանց վրայ: Ակն քաղաքի անցեալ Սեպտեմբերի Ջարդէն յետոյ մէկ Ակնցի միայն այդ քաղաքէն մեկնելով մինչև Ամերիկա եկած է, այն է Տիկին Մ. Գ., որ իբրեւ ականատես վկայ կենդանի շրթամբ պատմեց մեզ ամեն ինչ երկարօրէն:

Տիկին Գ. Ակին ազնուական ընտանեաց մէկուն կը վերաբերի և ուսած ու ուշիմ անձնաւորութիւն մ'է: Իւր տեղեկութիւններն ամեն երկբայութէնէ վեր են: ՀԱՅԿ-ի անգլիերէն բաժնին մէջ աւելի ընդարձակ կուտանք այդ աղբիւրէ ստացած մեր տեղեկութիւններն, բայց կը խոստանանք յաջորդ թուով ևս գրել Հայերէն բաժնին մէջ սոյն նիւթի վրայ:

Ակին կոտորածին մէջ երկու բան մասնաւոր ուշադրութեան արժանի են. Ջարդին ահաւորութիւնը և Հայոց ինքնապաշտպանութեան ինչ և իցէ փորձ չանելը:

Տիկին Գ. չի կրնար ասել թէ 1,000 թէ 1,500 կամ աւելի Ջարդուած են, սուրը չէ միայն, կրակն ալ շատ մարդ է կերեր:

Հաշուին դիւրին և աւելի գործնական կերպն է համրել թէ քանի այր մարդ ողջ է մնացեր.— յոյժ քիչ. քառասուն կամ յիսուն: Թէև հրահանգ տրուած է եղեր թէ 15 տարեկանէն վար տղայքը պարտ է չսպաննել, սակայն ոչ սակաւ արուդմանուկներ ալ սպաննուած են, մանաւանդ հարուստ ընտանիքներէն, որպէս զի անճիտանան բոլորովին: Աղատեալսակաւաւորք ալ մաղապուր պրծեր են, գրեթէ հրաշալի կերպով և հակառակ ամենասաստիկ խուզարկութեանց ի ծակս և ի ծածուկս, ի ձորս և ի ծործորս քաղաքին: Թշնամեաց հաստատ դիտաւորութիւնն է եղեր բնաւ արու հայ չթողուլ 13 կամ 14 տարեկանէն վեր:

Բաղդատելով զայս ուրիշ քաղաքաց Ջարդերուն հետ՝ կը գտնենք քան զամենայն կատարեալն ու սոսկալին: Եւ սա հարցումն բնականապէս կը ներկայանայ ամենուս մտքին—ինչո՞ւ Ակին բաժակը այսքան դառն եղաւ:

Եթէ Ակնցիք յեղափոխական ցոյցեր արած լինէին ինչպէս արած էին իրենց դրակից Արաբկերցիք, պիտի կարծէինք թէ զթրքերը այդպէսով կատղեցուցեր էին: Եթէ Ջարդի առաջին ժամերուն երիտասարդներէն ոմանք դիմադրած լինէին զէնքով, զինուորներ կամ գէթ Թուրքեր, գոնէ քանի մը Քուրդ սպաննած լինէին, պիտի կրնար ենթադրուիլ թէ ի տես այդ յանդգնութեան թշնամիք աւելի բորբոքած էին և չափն անցած: Սակայն իրողութիւնը, սոյդ իրողութիւնը, այն է թէ Ակնայ մէջ յեղափոխական գոմիթէ չէ եղած և Ջարդի օրն կամ անկէ առաջ ամենեւին ինչ և իցէ գրգռիչ ընթացք չեն ունեցած Հայերը:

Ընդհակառակն, Ակին Հայերը զարմանալի կերպով զդոյշ գտնուած են: 1895 ին 2 հազար ոսկի տուգանք տալով սպառնացող կոտորածէն ազատ մնալէ յետոյ՝ սա հաւատքին մէջ հաստատուած են թէ —դրամի և խոհեմութեան միջոցով կրնան սիրաշահիլ մինչև վերջ տեղական իշխանութիւնները քաղաքային և զինուորական՝ և մնալ անվտանգ ի սպառ: Առաջին սպառնալիքին ի դերեւ ելնելէն յետոյ

յանձներ են նաև իրենց զէնքերը կառավարութեան, իբրև անդրադոյն երաշխիք մը իրենց վստահութեանն ի պաշտօնական պաշտպանութիւն։ Հայերն իրենց այս քաղաքականութեան վրայ ևս քան զևս հաստատող ուրիշ պարագայ մ'ալ այն եղած է որ քանի մը անգամ Բրդերը մոտեցեր են քաղաքին, բայց հաղարապետը իւր զօրօք դէմ ելեր և ետ դարձուցեր է զանոնք։ Մերայինք բնականապէս տեղի ունեցեր են իրենք զիրենք ընորհաւորելու իրենց իմաստուն և շրջահայեաց քաղաքականութեանը համար, որով յաջողեր են այնքան անգամ համայնաւեր արհաւիրքի ալիքները ետ մղել իրենց քաղաքի սահմաններէն։ Զինուորական իշխանութիւնը իւր այս բարի տրամադրութեան մէջ ամուր պահելու համար հայ երևելիք անդադար բարեօք լեցուցեր են հաղարապետին բնակարանը, և հազար ու մէկ նուէր են արեր։ Օ՛, հաղարապետը կ'երդնու թէ վտանգ չի կրնար պատահիլ։ Եւ հարիւրապետները, ջարդէն քիչ օրեր առաջ, կասեն հայ երեւելիներուն թէ ալ այնուհետև կարգը Թրքերուն է պաշտպանութիւն և ապաստանարան խնդրել Հայոց յարկերուն տակ։

Վերջապէս դէպքերն կ'ապացուցանեն թէ Թրքերը շարունակ ստեր են, շարունակ խաբեր և օրորեր են հայ երեւելիները, անդադար կթելով անոնց ստացուածքը ցվերջին կաթիլ, և վերջապէս նաև արիւնը։

Ի՜նչ անյաստակ խորութիւն Թրքական խաբէութեան և ապերախտ վատութեան։

Ուրիշ կարեւոր կէտ մը։ Սուլթանը անդադար ջանաց հաւատացնել Եւրոպիոյ թէ Հայք ապստամբ էին, թէ անոնց մէջ յեղափոխական Ցանձնախմբեր ապստամբութիւն կը նիւթէին։ Ակին անհուն աւերակաց ծանրութեանը տակ կը ճմլի այդ խաբէութիւն։ Ակին Հայերը յեղափոխական շարժում արած չունէին, իրենց զէնքերը յանձներ էին, իրենց վստահութիւնը դրած էին տեղական իշխանութեան վրայ և խոնարհութեամբ, զգուշութեամբ, գրեթէ ստրուկի պէս կ'ապրէին երկու տարիէ ի վեր։ և սակայն դարձեալ չխնայուեցան, և ոչ թէ միայն ջարդէ ազատ չմնացին, այլ ջարդերու ամենէն զարհուրելին բաժին ունեցան։ Սուլթանը այնքան բարեսիրտ ու այնքան արդար է որ իւր ամենէն աւելի հաւատարիմ հպատակները ամենէն աւելի չարաչար կը հարուածէ։

Ահաւոր դաս մը կայ հոս։ Թող բոլոր Հայերը որ ի Թուրքիա կը բնակին, լաւ գիտնան զայս թէ Սուլթանը, եթէ ազդուապէս չզսպուի օտար տէրութենէ մը, տակաւին շատ չարիք պիտի թափէ իրենց գլխուն և շատ հայ պիտի ջարդէ, թէկ Հայերը վերջին աստիճան հանդարտ և իաղաղ մնան։ Ո՞վ կրնայ աւելի խելօք ու հանդարտ մնալ քան Ակն, և սակայն անոր ալ վայն ի վրան բերին Թրքերը։

Դիտենք վերջապէս և այն ցաւալի բայց ստոյգ իրողութիւնը թէ Թուրքիոյ Հայք, եթէ քանի մը տարի առաջ հոս հոն քանի մը ցոյցեր արին, հիմա այնքան ընկճուած, աղքատացած, նուազած, անօթի, շուարած են, որ ալ պարապ բան է ասել։ Ինչպէս մի ամերիկացի թերթևամիտ թղթակից օրերս ասած է, թէ Հայերը Թուրքիոյ այս ինչ կողմը նորէն ոտքի պիտի ելնեն դարուն։ Այսպիսի խօսքերը ոչ միայն ապուշ մարդու խօսքեր են այլ և մոլորեցուցիչ։

Թուրքիոյ Հայերը այնքան սարսափած են որ այսուհետև աւելի ողորմելի կերպով և առանց ինչ և իցէ դիմադրութեան պիտի ջարդուին, եթէ ջարդի նոր փորձեր անեն Թրքերը։ Լաւ է որ այս ճշմարտութիւնը ըմբռնեմք և ըստ այնմ խօսինք օտարներուն ալ։

ՆԱՄԱԿ ՎԱՆԵՑԻԷ ՄԸ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԻ ԴԷՊՔԵՐՈՒՆ

Ցաւալի է թէ կան Հ. Սմիթի նման անձինք որք անուղղակի հարուածներով կը ջանան խախտել Հայկական խնդիրը, և ոչ ոք գէթ անուղղակի, չասեմ հրապարակաւ, հարուածեց այդ թղուկներ, որք կը ջանան տապալել մի հսկայ խնդիր, որ գոյացած է բիւրաւոր անմեղներու արեան հոսանքէն։ Այդ կարգին կը պատկանին այն դատողութիւնք, որք եղած էին նըկատմամբ Վանի դէպքին, և որոյ մի մասդուք ևս թարգմանելով զետեղած էիք ձեր ընտիր թերթի սիւնակներու մէջ։ Արդ, իբրեւ ականատես վկայ Վանի անցից և իրազեկ տեղւոյն երիտասարդաց շարժմանց, կ'ուզամ յայտարարել թէ այդ քննադատութիւնք խիստ են և միակող-

մանի ։ Հայ հայրենասէր երիտասարդաց և կամ յեղափոխականաց վերագրուելու չեն սխալներէն շատեր։ Չեմ ասեր թէ յեղափոխականք գլխովին արդար էին ։ Միթէ յիմարութիւն չէ՞ պահանջել հայրենեաց սիրով վառուած երիտասարդներէ, որք ոչ համալսարանական էին և ոչ դիւանագէտ, չարժիլ և գործել Եւրոպայի դիպլոմատիայի նրբին և անհասկանալի փոփոխմանց համաձայն ։ Ես կարող եմ խղճի մտօք ասել թէ յեղափոխականք արին ինչ որ իւրեանց պարտք և ժողովրդին կամքն էր ։

Յեղափոխականաց դէմ ամենէն շատ քննադատութիւն ընող անձը որոյ անունը դուք լաւ գիտէք, խիստ մօտէն կը ճանաչեմ և հասու եղած եմ `իւր գաղափարաց և զգացմանց ։ Նա այնչափ կծու կը խօսի յեղափոխականաց դէմ ոչ թէ ճըշմարտութիւնն այն է այլ որովհետև տարիներ առաջ անձնական անհամաձայնութիւն ունեցաւ անոնց հետ, զոր գրել պատեհ չեմ համարիր ։ Այդ անհամաձայնութենէն վերջ նա միշտ առիթ կը փնտռէր զայնս հարուածելու, սակայն ինչպէս ինք կ'ասէր, կը վախնար ։ Եւ Այսօր երբ ըստ իւր կարծեաց յեղափոխութիւնը ջախջախած է կը յանդգնի հարուածել զանոնք առաջին պատեհութեամբ ։

Եւ դուք, խմբագիր տէր, դուք որ երբեմն ձեր պերճախօս լեզուաւ և գրչով, ձեր դիւթիչ ատենախօսութիւններէն միոյն մէջ ՁԱ՛ՐԿ կը գոռայիք հայ երիտասարդին, զա՛րկ հայրենեաց սուրբ աւերակաց համար, զա՛րկ Հայոց անմեղ կոյսերու և անբիծ մանուկներու արեան համար, միթէ՞ պիտի չյօժարիք գրել մի քանի տող ի նպաստ և ի պաշտպանութիւն այն հայ հերոսաց որք մինչև իրենց վերջին շունչ իրենց վերջին գնդակը որոտացուցին զարնելու ի փոխարէն հայ անմեղներու արեան վարդակարմիր հեղեղներուն, որոյ հետքեր ցայժմ կը մնան Այրարատայ երկրի լերանց ժայռերու վրայ և բարեբեր դաշտերու մէջ, բողոքելու Ամենակարողին և հայցելու իւր անըմբռնելի զօրութիւնն և յաւիտենական կատաղութիւն ի վրէժխնդրութիւն հայ արեան ։

Մ · Ա · ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՆԱՄԱԿ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷ

Ռուսչուք, Յունվար 2, 1897

Մի քանի օր յառաջ ի Ռուսչուք եկաւ Գերմանիայից Պատ․ Ամիրխանեանց՝ Հայոց ներկայ վիճակն հասկնալու և մի քիչ օգնելու ։ Երէկ այցելեց Հայոց ընթերցարանը ուր հոծ բազմութիւն մը կը սպասէր ։ Ատենախօսը նկարագրեց թէ մեր ազգը անցելոյն մէջ ինչ կորուստներ ունեցեր է, և ներկային գալով՝ ասաւ՝ թէ հակառակ այս ամեն զոհերուն որոնք կրօնի համար մարտիրոսացած են, պիտի ապրի Հայ Ազգը, ինչպէս ապրած է ցայսօր ։ Հայոց ազգային կենսունակութիւնը քրիստոնէութեան վերագրելով, բաղդատեց օրինակներով մահմետականութեան հետ ։ Յետոյ խօսեցաւ Գերմանիոյ մէջ ի նպաստ Հայոց եղած շարժմանց նկատմամբ, և ամենէն վերջ մի քանի բարոյական խրատներ հանեց խօսածներէն ։ Սոյն պահուն Պրն․ Յարութիւն Փափազեան (Դաշնակցականաց գլուխը) սրահէն դուրս ելաւ դըժգոհութիւններ գրմխտալով ատենախօսին դէմ (ոչ շատ բարձրաձայն)։ Պարտիզակցի մը յանդիմանեց զնա իբրև անքաղաքավար, որով սկսաւ վէճ մը, և ընդհանուր շփոթութիւն յառաջ եկաւ ։ Պրն․ Փափազեան աջակից առնլով ուրիշ մի քանիներ ևս՝ սկսաւ ատենախօսին դէմ խօսիլ և իւր խօսքերը ծափահարուեցան ։

Ըստ Պրն․ Փափազեանի և իւր կողմնակիցներուն՝ Պատ․ Ամիրխանեան չպէտք է եղեր բարոյական խրատ հանել ասածներէն, վասն զի այդ կը լինի կերպով մը զիրենք բողոքականութեան հրաւիրել։

Պրն․ Փափազեան բարձրաձայն կը պոռար հիւրին—հոս ժողովարան չէ, դո՛ւրս ելիր, դո՛ւրս ։ Բազմութեան մէջ կային ոմանք որ դժգոհութիւն յայտնեցին այս անտեղի յարձակման համար, բայց մեծ մասը կարծեց թէ ատենախօսն իրաւ մեղաւոր էր բարոյական խրատ տալու մէջ ։ Ամիրխանեան դուրս ելաւ գլխիկոր և տրտմած ։ Ես ալ տրտմեցայ ։

* * *

Շիքակոյի Inter–Ocean օրաթերթը արտատպած է ՀԱՅՔի «Հայ Կինը» խորագրով անգլիերէն յօդուածը ։

ՊԱՏ. ՏՐ. ՔԵՐՔԱՍԻ

ԲԸՆԸԼԽՕՍՈՒԹԻՒՆՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ

Տեարք,

Դուք Հայաստանէն եկած էք Ամերիկա, եզական երկրէ մը եկած էք յայլ իմն եզական երկիր։ Գիտէք ձեր բնիկ աշխարհին հնութիւնը զարմանալի, ոչ նուազ զարմանալի է Նոր Աշխարհիս նորութիւնը։ Եւ որ աւելին է, հոս կը գտնէք թէ հինը և թէ նորը։ Ամեն կլիմա, ամեն բոյս, ամեն ազգէ և ցեղէ ներկայացուցիչներ։ Չինացի, Ճարոնացի, Բոլոնիացի, Տանիմարքացի, Թուրք ալ, որոյ անունն իսկ գարշելի է ձեզի։

Այսքան հնութեանց և նորութեանց հիանալի խառնուրդին առջեւ եթէ երբեմն չուարիք, չեմ զարմանար։ Հարկաւ յաճախ տխուր և անոք կը զգաք դուք զձեզ երբ գործ չունենաք և դրամի նեղութիւն կրէք։ Այն ատեն դուք ձեզ կը հարցնէք բնականապէս թէ ինչպէս պիտի հուն ելնէք, ինչպէս պիտի կրնաք յաջողիլ։

Ձեզի այդ մասին խրատ մ'ունիմ տալ. մէկ խրատ մը։ Չեմ ասեր թէ բոլորովին հաճելի է ամենուդ, բայց կարեւոր է ձեր յաջողութեանը համար։

Եւ խրատս աս է որ Ամերիկացի լինիք եթէ կ'ուզէք Ամերիկայի մէջ յաջողիլ, «մարդ լինիլ»։

Առածը կ'ասէ «երբ ի Հռովմ ես, Հռովմայեցւոց պէս վարուէ։» Մի մոռնաք ձեր քաղցր Հայաստանը, բայց եթէ կ'ուզէք Ամերիկայի մէջ ապրիլ, եղէք մեզի պէս։

Ամերիկացի լինելու պայմանները երեք են։

Նախ— անգլիերէն սովրեցէք։ Ձեր մայրենի լեզուն որքան ալ հարուստ լինի, չի կրնար ձեզ հարստացնելու ծառայել այս երկրին մէջ։ Տեսա՞ք երբէք խանութ մը Նիւ Եորքի մէջ որուն վրայ գրուած լինէր «Հոս հայերէն կը խօսուի։» Բայց կան սպաներէն, գերմաներէն, ֆռանսերէն ևն խօսող խանութներ։ Հայերէնը ձեզի ամենէն քիչ օգտակար եղող լեզուն է գործի տեսակետով, և անգլիերէնը՝ ամենէն օգտակարը։ Ուրեմն բոլոր ուշադրութեամբ սովրեցէք անգլիէրէնը, գիշերային դպրոց յաճախեցէք, ասանկ դասախօսութիւններու ունկնդրեցէք, եկեղեցի գնացէք, և ամեն միջոցէ օգուտ քաղեցէք երկրին լեզուին տիրանալու։

Երկրորդ— Ամերիկացի լինելու համար Ամերիկացի բարեկամներ շահեցէք։ Չեմ ասեր թէ դուք իրարու հետ միտեսնուիք, բայց Ամերիկեան Գլիւպներու, գործաւորական միութիւններու, եկեղեցիներու անդամ եղէք։ Այդպէս անելով մեծ քայլ մ'առած կը լինիք դէպ յաջողութիւն։

Երրորդ—Ամերիկացւոց պէս զգացէք։ Մեր լեզուն, մեր ընկերակցութիւնը և մեր խորհուրդները իւրացնելու հետ պէտք է իւրացնէք նաև մեր զգացումները որպէս զի ճշմարիտ ամերիկացի լինիք։ Անշուշտ ամեն ազգի և ժողովրդի մէջ առաքինութիւն ասուածը ծանօթ է, բայց ոչ ամեն ազգի մէջ ճիշդ նոյն չափն ու աստիճանը կուտան առաքինութեան պէսպիսութիւններուն։ Չինացիք ապրանքի մը համար չորս տարբեր գներ ունին. բարձրագունէն կը սկսին սակարկելու ատեն և մինչև որ երկրորդ, երրորդ և չորրորդ գներուն հասնին, կէս օր կը կորսնցնեն իրար համոզելով։ Սպանիացիք ալ ճշմարտախօսութիւնը առաքինութեանց գլուխ համարող ժողովուրդ մը չեն։ Թրքերն ալ ունին առաքինութեան գաղափարը և գիտեն թէ ինչ է ժուժկալութիւն ևն ևն, բայց ստախօսութիւնը դիւանագիտութիւն կը համարին և ժուժկալութիւնը, այսինքն ոգելից ըմպելիք չխմելը՝ առաքինութեանց գագաթը դրած են, իսկ ստութիւնը, հեշտասիրութիւնը, նոյն իսկ գողութիւնն ու սպանութիւնն բան մը չերեւիր իրենց աչքին։ Ադկէ կը հետևի պարզապէս թէ առաքինութիւնը կրնայ շատ թերի և նոյն իսկ թիւր կերպով ըմբռնուիլ և դասաւորուիլ այլևայլ ազգաց մէջ։

Այժմ ասեմ ձեզ թէ մեք Ամերիկացիքս ինչպէս կը դասաւորենք առաքինութիւնները. մենք ճշմարտութիւնն ու պարկեշտութիւնն կը դնենք գագաթը։ Հարկաւ չեմ ուզեր այն միտքը յայտնել թէ սուտ խօսողներ և իարդախներ չկան մեր մէջ. բայց մեր լաւագոյն խանութպանները մէկ գին ունին ապրանքի մը համար։ Մեր լաւագոյն քաղաքացիները ուղղակի ճշմարիտը կը խօսին և պատրաստ են ճշմարտախօսութեան հետևութիւնները ընդունե-

լու։

Ուրեմն, Տեարք, ամերիկացի լինելու համար պարտիք սովրիլ անգլիերէն խօսիլ, անգլիերէն վարուիլ, անգլիերէն զգալ։ Ճշմարիտ Ամերիկացի կը լինիք միայն այն ատեն երբ ճշմարտախօս և պարկեշտ լինիք ոչ թէ Թրքի կամ Սպանիացիի կամ Ֆռանսացիի պէս, Այլ Ամերիկացիի պէս։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՃՆՇՈՒՄՆ

Լոնտոնէն կարեւոր լուր կայ։ Կառավարութեան կողմէն հրատարակուած նոր Կապոյտ Տետրակը Թուրքիոյ բարեկարգութեան վերաբերութեամբ եղած դիւանագիտական բանակցութիւնները կը պատմէ, որոնցմէ կ'երեւի հետեւեալը։

Անցեալ Սեպտեմբերի 23ին Լորտ Սոլզպուրի առաջարկած է որ Տէրութիւնք միջոց ձեռք առնուն բռնի ի գործ դնելու իրենց առաջարկները, և որ եթէ ո և իցէ Տէրութիւն դժկամակի բուռն գործողութեան մասնակցելու, նոյն տէրութիւնը չհակառակի ուրիշին մասնակցութեանը։

Աւստրիա այս առաջարկին կը յարի անպայման կերպով, և յետոյ Գերմանիա ևս կը հաւանի այն պայմանաւ որ ճնշողական միջոցները բոլոր տէրութեանց միաձայն հաւանութեամբը լինին, և որ Թուրքիոյ ամբողջութիւնը անխոռ պահպանուի։

Իտալիա կուտայ իւր բացարձակ հաճութիւնը այս առաջարկի, բայց Ռուսիա կ'առարկէ ամենայն ծրագրի դէմ որոյ գործադրութիւնը բռնութեամբ պիտի լինի։ Զայս առարկութիւն անելու ատեն Պրն. Շիշկին, յայնժամ ի գլուխ Արտաքին Գործոց Նախարարութեան, կը յայտարարէ թէ ճնշողական գործողութիւնը Զարին անախորժ է։

Ի պատասխան այսմ՝ Լ. Սոլզպուրի գանգատող ոճով մը ցոյց կուտայ Ռուս Նախարարին թէ բոլորովին անօգուտ է այս ևս միաձայն ներկայացումներ անել Դրան ի մասին բարեփոխմանց եթէ Տէրութիւնք պատրաստ չեն իրենց առաջարկներն բռնի ի գործ դնելու։

Նոյ. 24ին Պ. Շիշկին կը գրէ առ Լ. Սոլզպուրի թէ Զարը կը հաւանի բռնութեան խնդիրը նկատի առնլու եթէ Սուլթանը յամառի և եթէ միւս Տէրութիւններն միաձայնօրէն ի նպաստ լինին ճնշողութեան դիմելու։

Ի վերջկոյս դեկտեմբերի Ֆռանսա կուտայ իւր հաւանութիւնը նոյն պայմաններով, և Ռուսիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ կառավարութիւններն կը վերահաստատեն իրենց հաւանութիւնը։

ԼՈՐՏ ՍՈԼԶՊԷՐԻԻ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵՆԷՆ

Յունուար 1ին Անգլիոյ խորհրդարանը վերաբացուեցաւ, ուր նախարարապետ լորտը, խօսելով Արեւելեան կացութեան մասին ևս ասաւ թէ պահպանողական կառավարութիւնը 1878ի հակառուս քաղաքականութեան սկզբնաւորողը չէր եղած. Խրիմի պատերազմն էր անոր սկզբնաւորութիւնը, սակայն Տէրութիւնք այժմ ընդհանրապէս միաբան էին որ եթէ Հայաստանի բարենորոգումներ չչնորուէին, Եւրոպիոյ մնացեալը նիւթական ճնշում պիտի գործածէր Սուլթանին դէմ։ Զայս անելու կերպին նկատմամբ Տէրութեանց հաղորդագրութեանց մէջ բացատրութեանց թեթև տարբերութիւններ կան, ասաւ, սակայն անոնց ամենքն ալ համոզուած են թէ՝ եթէ Սուլթանը իրական և արդիւնաւոր բարենորոգումներ չմուծանէ, դէշ հետեւանքներ երեւան պիտի գան։

ԶԱՐԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Զարն թոյլտուութիւն չնորհեր է հրապարակային հանգանակութիւն մը բանալու ի նպաստ Կովկաս ապաստանած հայ գաղթականներուն։ Մինչև այժմ ամենատեսակ հայկական յանձնախումբներու դէմ ռուս մամլոյ կողմէն եղած հակառակութիւնը անյուսալի արած էր այս տեսակ շարժման մը յաջողութիւնը։ Սակն ինչ որ յօգուտ Հայոց անել ուզուէր, կը հարուածուէր իբրեւ Լոպանոֆի քաղաքականութեան անհամակերպ շարժում։ Մինչև անգամ ազգ կը յղուէր գրաքննութեան կողմէն առ լրագիրներն որ չհամակրէին Հայոց։ Միայն մէկ լրագիր մը ի Բեղերպուրկ, «Բեղերպուրկեան Վիէտօմոսթին», որոյ սեփհականատէրն՝ իշխան Ուխթոմս-

քի՝ կայսեր անձնական մէկ ծանօթն է, կը համարձակէր Հայոց բաղդը ողբալ և կ'առաջարկէր որ Հնդկաստանի սովելոց համար եղած հանգանակութեան կէսը անոնց տրուէր: Սակայն երբ այդ նպատակաւ դրամ տրուէր, կը մերժուէր։

Այժմ որ կայսրը վաւերացուցած է Ներքին Գործոց Նախարարին առաջարկը յօգուտ Հայոց հրապարակային հանգանակութիւն մը բանալու, քաջալերական նշան մը պէտք է նկատել զայդ, թէպէտ դըրուած պայմաններն կը թուին ցուցնել թէ հայկական դաւադրութենէ դեռ կասկած կայ կառավարութեան մտքին մէջ։ Ո և է մէկը կրնայ դրամ հաւաքել և Հնդկաց յղել, Բայց Հայոց համար եղած նուիրատուութիւններն միայն ու միայն այդ նը-պատակաւ կարգուած պաշտօնէից պէտք է յղուին և գաւառական կառավարիչներու ձեռքով փոխանցուին Կովկասի ընդհանուր կառավարչին։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԻՒԸ

Վերջին երկու շաբաթներուն մէջ այլ և այլ կողմերէ հասան խմբագրութեանս յղուած Ամերիկայի Հայոց վիճակագրութիւններ, բայց մեծագոյն դաղթականութիւններուն հաշիւը դեռ չստացանք։ Ցուսանք թէ յաջորդ թուով կարող պիտի լինինք ամբողջը հրատարակել։

ԳՈՐԾ ԳՏՆԵԼՈՒ ՃԱՐԸ

Այն Հայերը որք կը փափաքին ՀԱՅԿԻ անգլիերէն բաժնին մէջ դնել իրենց ծանուցումը, կրնան յղել ամսուն 1էն և 15էն մինչև չորս օր առաջ։ Ամեն մէկ ծանուցումին համար պէտք է կանխիկ յղել 25 սէնթ, պայմանաւ որ երեք աղէն աւելի չլինի։ Պէտք է դնել ծանուցմանը մէջ թէ ինչ արհեստ կամ գործ գիտէ կամ կ'ուզէ անել։ Այսպիսի ծանուցումներ կրնան մեզի յղուիլ ամեն նահանգէ։

Լոնտոն, Յունվար 20.—Պոլսեան հեռագիր մը առ Տէյլի Մէյլ կ'ասէ թէ Սուլթանը հաստատապէս կը հակառակի եւրոպեան ղեկավարութեան ենթարկելու Թուրքիոյ ելմտական մատակարարութիւնը։ Հեռագիրն կ'ասէ նաև թէ Ռուսիա գաղտ կը բանակցի Սեւ Ծովուն վրայ նաւահանգիստ մը ձեռք բերելու։

Նիւ Եորքի թերթերուն մէջ խնդիր կը յուգուի այս միջոցիս թէ պէտք է Միացեալ Նահանգաց ներկայացուցիչը ի Կ. Պոլիս այսուհետև լինի դեսպան և ոչ պարզ մինիսթրը ինչպէս եղած էր ցարդ։ Փաստն այն է թէ դեսպան մը միայն կ'ունենայ այն դիրքը և արտաքին հանգամանքը որք կարեւոր են ազդեցիկ և պատկառելի անելու մեծ ազգի մը ներկայացուցիչը, մանաւանդ արեւելեան երկիրներու մէջ։

Կ. Պոլիս Յունուար 11— Սուլթանը Պատրիարք Օրմանեանի շնորհեր է Մէճիտիյէ շքանշանը։

ՀԱՅԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Գահիրէ, Ա. Ղ. — «Վերականգնումն Հայոց» սպառած է շատոնց։

Գահիրէ.—Մարզարանի գինը 50 սէնթ է. ծանուցմանը մէջ նշանակուած է։ Մէկ տոլարը 5 ֆրանք, 50 սէնթ կամ կէս տոլարը 2½ ֆրանք կ'անէ։ Արժէքը չստացած չենք կրնար գիրք յղել։

ՀԱՅԿ

ՀԸՆԴԻՍ ԿԻՍԱՄԱՆԱՅ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ
երկու տոլար (տասն ֆրանք)
Հասցէն է
M. S. Gabriel, M. D.
341 West 23rd St., New York.

Թղթադրամ պարունակող նամակները պէտք է ապահովագրել։

Օտար երկիրներէ դրամ կրնայ յղուիլ Գռէտի Լիոնէի փոխանակագրով, կամ Մընի Օրտըրով (Money Order), կամ Ֆռանսական Դէմպոզը Փոսթով։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեզ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROS.

BOOKBINDERS

SINGLE VOLUMES OR IN QUANTITIES.

5 and 7 East 16th St.,

NEAR 5TH AVE.

NEW YORK.

ՆԻՒՄԱՆ ԵՂԲԱՐՐ

ԳԵՂԱՄԱՆ ԳԼԽԱՐԿԱՐՔ

5 ԵՒ 7 ԱՐԵՒԵԼՔ 16Դ ՓՈՂՈՑ

ՄՕՏ 5Դ ՊՈՂՈՏԱՑԻՆ

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԱՅԿԻ

ՓՈՔՐ ՕՐԱՑՈՅՑՔ

ՆՈՒԷՐ ԻՒՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ



Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

FACTS ABOUT ARMENIA

This pamphlet contains a report of the Sassoon massacre by a native refugee, the great Chester speech of Mr. GLADSTONE on Armenia and the renowned article of Dr. Dillon on the fearful condition of Armenia for many years before the late massacres.

Price 15 cents.—To write to the Editor of HAIK, 341 W. 23d St.

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ժևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատարար, չարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ